


## ՌԱՎԵՆԻ ՊՐՈԳՐԵՍԻՎ ՄԱՏՐԻՑԱՆԵՐԸ

Ջոն Քարլայլ Ռավենը (John Carlyle Raven) պրոգրեսիվ մատրիցաները մշակել է դեռ 1936թ.-ին, որն այնուհետև ունեցել է բազմաթիվ մոդիֆիկացիաներ: Այս մեթոդի հիմնական տարբերությունը Այզենկի թեստից կայանում է նրանում, որ վերջինս բաղկացած է միմիայն պատկերային խնդիրներից՝ մատրիցաներից: Ուսումնասիրության ընթացքում, հետազոտվողին ներկայացվում են տարաբնույթ պատկերներ, որոնք միմյանցից որոշակի տրամաբանական կախվածության մեջ են գտնվում: Պատկերի ստորին հատվածում բերված են 6-8 հատ այլ պատկերներ, որոնցից մեկը միայն պետք է ընտրի հետազոտողը՝ հիմնական պատկերի ընդհանուր տրամաբանությունը բացահայտելուց հետո (տես օրինակը՝ Նկար 1): Օրինակ, ստորևբերված մատրիցայում ակնհայտ է որ ճիշտ պատասխանը՝ 1 համարի տակ գտնվող պատկերն է (տես Նկար 1):

Նկար 1. Պատկերի օրինակ Ռավենի թեստից



Ռավենի թեստը կազմված է 60 այդպիսի պատկերներից, որքն էլ իրենց հերթին բաժանված են 5 սերիաների (A, B, C, D և E):

Պատկերների ամեն մի սերիա կազմված է բարդության աստիճանի աճման սկզբունքով:

Ինչպես արդեն նշվեց քիչ վերևում, Ջ.Ռավենի թեստը կազմված է 60 այդպիսի պատկերներից, որոնք էլ իրենց հերթին բաժանված են 5 սերիաների (A, B, C, D և E):

Պատկերների ամեն մի սերիա կազմված է բարդության աստիճանի աճման սկզբունքով:

Հրահանգը. «Հարգելի հետազոտվող, ողջ թեստի լրացման համար Ձեզ տրվում է 20 րոպե: Թեստում Դուք կգտնեք 60 պատկերավոր խնդիր-գլուխկոտրուկ: Մի շտապեք, սակայն հիշեք նաև որ ժամանակը սահմանափակ է: Շնորհակալություն»:

**Արդյունքների մեկնաբանությունը**

Ամեն ճիշտ պատասխան գնահատվում է 1 բալ: Բոլոր ճիշտ պատասխանների հաշվարկից հետո ստացված թիվն էլ հենց հանդիսանում է IQ ընդհանուր ցուցանիշը:

Ջ.Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների արդյունքների վերլուծության և մեկնաբանության համար կիրառվում է հինգ մակարդականոց IQ-ի հետևյալ համակարգը.

- 1-ին մակարդակ (57 և ավելի ճիշտ պատասխան - 95 %) – առանձնահատուկ բարձր IQ,
- 2-րդ (45-56 ճիշտ պատասխան - 75-94 %) – միջինից բարձր IQ,
- 3-րդ (15-44 ճիշտ պատասխան - 25-74 %) – միջին IQ,
- 4-րդ (3-14 ճիշտ պատասխան - 5-24 %) – միջինից ցածր IQ
- 5-րդ (3-ից քիչ ճիշտ պատասխան - 5 %) – ինտելեկտի դեֆեկտ, մտավոր հետամնացություն:

*Թեստի բանալին*

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
A	4	5	1	2	6	3	6	2	1	3	4	2
B	5	6	1	2	1	3	5	6	4	3	4	8
C	5	3	2	7	8	4	5	7	7	1	6	2
D	3	4	3	8	7	6	5	4	1	2	5	6
E	7	6	8	2	1	5	1	3	6	2	4	5